«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձեւավորման գործում**

Առարկան՝ **Հայ գրականություն**

Հետազոտող ուսուցիչ՝ Անուշ Ալեքսանյան

Ուսումնական հաստատություն՝ Օհանավանի միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն
2. Գլուխ 1
Հայրենասիրության և ժողովրդասիրության գաղափարական արտահայտումը էպոսում ……..…5
3. Գլուխ 2
Սոցիալական անարդարության արտահայտումը էպոսում ...……7
4. Գլուխ 3
Կին հերոսների կերպավորման առանձնահատկությունները և ազդեցությունը էպոսի ազգային արժեհամակարգի վրա ……8
5. Գլուխ 4
Քրիստոնեական պաշտամունքի դրսևորումները ազգային արժեհամակարգի կերտման գործում……10
6.Գլուխ 5
Հայկական էպոսի հերոսների վարքագիծը ազգային ինքնության համատեքստում ……..13
7.Գլուխ 6
Վիպական ընդհանրացումները <<Սասունցի Դավիթ >> էպոսում14
8. Եզրակացություն ……..17
9. Գրականության ցանկ……..18

Ներածություն

Ինչպես Մանուկ Աբեղյանն է ասել , <<Սասնա ծռեր >> վեպը իր ստեղծող ժողովրդի հազարամյա կյանքի գեղարվեստական տարեգրությունն է, նրա կենցաղի հավատալիքների ու իղձերի ճշմարիտ մարմանվորումը : Դարեր շարունակ հայ ժողովուրդը ստեղծել է բազմաթիվ բանահյուսական նմուշներ ՝ հեքիաթներ , ասքեր, երգեր , առակներ , հանելուկներ: Սակայն ամենանշանավոր բանահյուսական երկը միջնադարում ստեղծված <<Սասնա ծռեր>> էպոսն է , որը հիմանականում կազմավորվել է արաբական արշավանքների շրջանում :

Էպոսը խարսխվում է ժողովրդի համար ճակատագրական պատմական իրադարձությունների վրա և արտացոլում է ժողովրդի կյանքը , կենցաղը , հավատալիքները , մտածելակերպը , պատկերացումները , աշխարհայացքը:Սյուժեի, կերպարների կերտման , կոնֆլիկտների բովանդակային տարատեսակ լուծումների միջոցով հայ ժողովուրդը ներկայացնում է իր ազգային նկարագիրը , բարոյական սկզբունքները : Էպոսի ճյուղերը իրար շաղկապող գաղափարական հիմքը հայրենասիրությունն է , որի շուրջ էլ ձևավորվում ու արտահայտվում է ազգային արժեհամակարգը :

Ազգային էպոսի գաղափարախոսությունը երբեք չի հնանում , որովհետև այն մարդուց պահանջում է սիրել հայրենիքը , լինել աշխատասեր ու մարադասեր, պահպանել հայ ընտանիքի ավանդույթները , չենթարկվել բռնակալներին , ունենալ անկախ հայրենիք ու ամենակարևորը ՝ խաղաղ գոյակցել աշխարհի այլ ժողովուրդների հետ :

Արդի կրթական համակարգում աշակերտի արժեքային համակարգի ձևավորումը համարվում է կրթության բովանդակային բաղադրիչ :

Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական , հոգևոր , իմացական , մշակութային և եթնիկական արժեքների համախումբն է , որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ , բազմակողմանի ձևավորման և զարգացման համար : Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը որի յուրացումը աշակերտի մեջ ձևավորում է հայրենասիրություն , սեփական ժողովրդի պատմության , նրա ստեղծած մշակութայիին արժեքների նկատմամաբ հպարտության զգացում : Իսկ արդեն ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Հետևաբար ժամանակակից մանկավարժության խնդիրն է սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները :

Էպոսը այն ստեղծագործությունն է որտեղ արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը , աշխարհընկալումը , մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները :

Այստեղ վառ կերպով արտացոլված են մեր ազգի հավաքական բնույթը , անդրդվելի կամքը , ներքին զորությունն ու հնարավորությունները , ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը :

Հետազոտական աշխատանքի նպատակները

- Էպոսի՝ որպես ազգային արժեքների ձևավորմանը նպաստող գործոնի ուսումնասիրում:
- Իմանալ էպոսի գաղափարական բովանդակությունը և կերպարների կերտման սկզբունքները :
- Ծանոթանալ հայ ժողովրդական դյուցազներգությանը ՝ որպես ազգային արժեքների համապարփակ արտահայտություն:
- Սովորողի դաստիարակության, մտածողության , բարոյական արժեքների ձևավորման , զարգացման վրա ներգործության բացահայտում :

Հետազոտության խնդիրները

- Ուսումնասիրելի թեմայի վերաբերյալ գրականություն
- Առաջադրել ուսումանդաստիարակչական գործընթացում հայրենասիրական և ազգային արժեհամակարգը արտահայտող ստեղծագործությունների յուրացմանը նպատակաուղղված միջոցներ
- Խթանել արդյունավետ մեթոդների գործադրմամբ դպրոցականների արժեհամակարգի զարգացումը և հայրենասիրության ձևավորումը

Գլուխ 1

Հայրենասիրության և ժողովրդասիրության գաղափարական արտացոլումը էպոսում

<<Սասունցի Դավիթ >> էպոսի առաջատար գաղափարը հայրենասիրությունն է : Սա էպոսի բացառիկ արժեքներից մեկն է : Հայտնի է , որ համաշխարհային ճանաչում ունեցող էպոսներից շատերը հիմնականում գրավոր մշակման ճանապարհով են հասել ընթերցողին : Դա ինքնին ենթադրում է որ այդ էպոսները որքան էլ հարազատ են մնացել ժողովրդական ստեղծագործության ոգուն և էությանը , այնուամենայնիվ , իրենց վրա կրում են անհատական ստեղծագործության կնիքը :

<<Սասունցի Դավիթ>> էպոսը ընթերցողին է հասել անաղարտ վիճակում , առանց անցնելու անհատական ստեղծագործության ոճով , որով ավելի է բարձրանում նրա արժեքը որպես բուն ժողովրդական մտածելակերպի արտահայտություն :

Էպոսի սյուժեն արտացոլում է 7-10-րդ դարերի՝ արաբական զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած երկարատև պատերազմները : Էպոսի հերոսները հայրենասիրության գաղափարի կրողներ են : Ե՛վ տղամարդկանց , և՛ կանանց գործողություններն ուն պատակները միտված են մեկ ընդհանուր գաղափարի՝ հայրենիքի պաշտպանության :

Սանասարն ու Բաղդասրը կառուցում են հայրենի Սասունը , Ծովինարը դիմում է անձնազոհության հանուն հայրենի երկրի , Մեծ Միհրը ազատում է իր ժողովրդին օտարի ոտնձգություններից , Արմաղանը դրժում է իր երդումը հանուն ժառանգության պահպանման :

Հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունը իր գեղարվեստական մարմանվորում ն է գտել Սասնա դյուցազունների չորս սերունդների կերարներում :

Սասնա դյուցազունները իրենց մարդկային բնավորության անհատական գծերով հանդերձ միաժամանակ ստեղծագործող ժողովրդի լավագույն ձգտումների , ցանկությունների ու երազանքների մարմնավորումն են և բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ :

Սանասարն ու Բաղդասարը , հիմանդրելով Սասնա բերդը , ապահովում են ժողովրդի անվատանգությունն ու քրտնաթոր աշխատանի անձեռնմխելիությունը :

Նրանք իրենց գերմարդկային ուժը օգտագործում են ոչ թե սեփական փառք ու իշխանություն ձեռք բերելու նպատակով այլ ի սպաս են դնում ժողովրդի բարորությանն ու ազատ կյանքին :

Բնութագրական է այն , որ Սանսարն ու Բաղդասարը առաջին հերթին Սասուն եկած աղքատների համար են տներ կառուցում , հետո ՝ իրենց համար ամրոց : Մեծ Միհրը երկար ժամանակ սասունցիներին պահում է որսով : Դևերին սանելուց հետո Դավիթը նրանց հափշտակած ոսկին բաժանում է ժողովրդին, իսկ ինքը բավարարվում է միայն մի ձիով :

Իսկ երբ հայրենիքի վրա կախվում է արտաքին վտանգը , նրանք առանց վարանելու դուսր են գալիս այն վերացնելու վճռականությամբ :

Ժողովրդասիրության ու հայրենասիրության փայլուն օրինակ է տալիս Առյուծաձև Միհրը : Իմանալով , որ երդմնազանց լինելու դեպքում ինքն ու կինը պետք է մահանան , նա դիմում է այդ քայլին , որպեսզի իրենից հետո Սասունն անտեր ու անպաշտպան չմնա :

Հայ ժողովրդի հերոսական պայքարի ու հայրենասիրության գաղափարի գլխավոր կրողը Սասունցի Դավիթն է : Մարրա Մելիքն ամեն ինչ անում է Սասնա ճրագը մարելու , Սասուն ըգրավելու համար : Բայց միշտ էլ նրա դեմ դուրս է գալիս ժողովրդի սիրելի հերոսը ՝ Դավիթը , որ խափանում է օտար բռնակալի բոլոր դիտավորությունները :

Ժողովուրդը աշխատավորի արդար զայրույթով ու սպանիչ ծաղրով է ներկայացնում բռնակալ Մելիքին ու նրա կամակատարաներին , իսկ Դավթի սխրագործությունները պատկերելիս ազատություն է տալիս իր երևակայությանը : Դավիթը չի անցնում բռնակալի թրի տակով , խփում է հարկահան Կոզբադնի գլխին, մի զարկով կտրում է քառասուն ջրաղացքար , քառասուն գոմեշի կաշի և Մելիքին երկու կես է անում : Այսպիսի երևակայությամբ է օժտված այն ժողովուրդը, որ դարեր շարունակ անհավասար պայքար է մղել սեփական գոյությունը հաստատելու համար :

Գլուխ 2

Սոցիալական անարդարության արտահայտումը էպոսում

Էպոսում իր արտացոլումն է գտել նաև ժողովրդի դարավոր երազանքը սոցիալական արդարությամբ առաջնորդվող հասարակության մասին : Ը ստ էպոսի Սասունը այն երկիրն է ուր չկա մարդու շահագործում մարդու կողմից , ուր ամեն ոք կարող է յուրացնել միայն իր աշխատանքի արդյունքը : Երբ աշխատավոր մարդիկ լսում են որ Սասունում ոչ հարկ են վերցնում, ոչ տուրք , բոլոր կողմերից գալիս և Սասունը բազմամարդ քաղաք են դարձնում :

Ժողովուրդը էպոսում հետևողականորեն զարգացնում է իրեն կեղեքող սոցիալական մեծ չարիքի՝ հարկահանության դեմ պայքարի գաղափարը : Մեծ Մհերը վերացնում է Մսրա Մելիքի դրած հարկը , Դավիթը պատուհասում է հարկահաններին , Փոքր Մհերը սպանում է արևմուտքի թագավորին և Գոհարի հոր երկիրը ազատում հարկ վճարելու հարկադրանքից : Արտաքին ու ներքին կեղեքիչների դեմ դարավոր պայքարի փորձը ժողովրդին բարձրացրել է շահագործողների ոչնչացնելու , իշխողներին ժողովրդի ներկայացուցիչներով փոխարինելու գիտակցության մակարդակին :

Էպոսում ժողովուրդը չի ընդունում նաև ուրիշի սեփականությունը յուրացնելու գաղափարը : Սասնա դյուցազունները ոչնչացնում են կողոպտիչներին , նրանց կողոպուտը վերադարձնում իր տիրոջը՝ ժողովրդին , և բավարարվում դրանով : Նրանցից ոչ մեկի մտքով անգամ չի անցնում նույնիսկ պարտված թշնամու ունեցվածքին ձեռք տալ : Մսրա Մելիքը հսկայական զորքով եկել էր Սասուն՝ թալանելու , ժողովրդին գերելու , Սասունը ավերելու վճռականությամբ : Իսկ ի՞նչ է անում հաղթող Դավիթը : Մելիքին սպանելուց հետո զորքին ազատ է արձակում , իսկ ինքը Քեռի Թորոսի կտրիճների հետ վերադառնում է Սասուն՝ մի սայլի վրա դրած տանելով Մելիքի ականջը՝ որպես նրա ոչնչացման ապացույց , և ոչ մի ռազմական ավար նա չի տանում :

Ժողովրդի իդեալները մարմանվորող դյուցազունները անտարբերությամբ և արհամարանքով են վերաբերվում իշխանական դիրքին ու թագավորական գահերին: Նրանցից յուրաքանչյուրը կանգնում է թագավոր դառնալու հնարավորության առաջ: Նրանք մերժում են թագավոր դառնալու առաջարկությունը և ասում , որ ոչ թագավոր կլինեն ոչ էլ քաղաքի տեր :

Սասնա դյուցազունները ոչ միայն Սասնա ժողովրդի , այլև ընդհանրապես աշխատավոր մարդկության շահերի պաշտպանն են : Նրանք լավ գիտեն, որ

ժողովուրդը խաղաղ և ստեղծագործ աշխատանքի կարոտ է , որ ժողովուրդները միմյանց նկատմամբ թշնամանք չունեն , թշնամություն հրահրողները տիրողներն են : Այդ ճշմարտությունը նա նույնիսկ ճանաչում է պատերազմի ամենաթեժ պահին ՝ արաբ ծերունու իմաստուն խոսքից հետո :Դավիթը մեծահոգաբար Մելիքի պարտված զորքին ուղարկում է Մսըր ՝ պատվիրելով գնալ իրենց խաղաղ աշխատանքին : Դավթի արդարամտության դրսևորումներից մեկը Կոզբադնից խլած թալանի վերաբաժանումն է :

Գլուխ 3

Կին հերոսների կերպավորման առանձնահատկությունները և ազդեցությունը էպոսի ազգային արժեհամակարգի վրա

Միջնադարյան խավարի պայմաններում, երբ տիրում էր եկեղեցական աշխարհայեցողությունը , մերժվում էր կինը ՝ որպես մարդկային ցեղի բոլոր մեղքերի նախապատճառ : Հայ ճողովուրդը այտ հետադիմական մոտեցմանը հակադրում է իր առողջ ու ճշմարիտ դիրքորոշումը ՝ կնոջը վերապահելով ոչ միայն տղամարդուն հավասար իրավունքներ , այլև հավասար պարտականություններ հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ : Կին հերոսները ևս օժտված են դյուցազնական հատկանիշներով , հայրենասիրությամբ ու ժողովրդասիրությամբ , արժանապատվության բարձր զգացումով ու բնավորության ուժեղ գծերով : Եվ այդ ամենը ՝ շաղախված այն անմնացորդ սիրով ու ջերմ հոգատարությամբ, որ տածում են իրենց սիրելիների նկատմամբ : Անմոռանալի է Ծովինարի անձնազոհությունը, որով փրկում է իր ժողովրդին : Միերի մահվանից հետո Դեղձուն Ծամը յոթ դռների ետևում սուգ է պահում , մինչև այն պահը , երբ Դավիթը գնում է Մելիքի դեմ կռվելու :

Սանասարի մահից հետո Դեղձուն Ծամը հագնում է ամուսնու զենքն ու զրահը և պաշտպան կանգնում Սասունին :

Էպոսի կանայք ինքնուրույն են ու նախաձեռնող , համարձակությամբ ու խիզախությամբ չեն զիջում տղամարդկանց , մեծ մասամբ իրենց են վերապահում ընտրություն կատարելու իրավունքը :

Խալիֆը պահանջում է Ծովինարին ՝ զգուշացնելով , որ մերժման դեպքում կավերի Հայաստանը : Ծովինարը կամովին իրեն զոհում է հանուն երկրի ու ժողովրդի :

Ծովինար խանում ասաց .

- Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ ,

Զամեն տի սպանի իմ պատճառով ,

Աղեկն էն է , ես երթամ,

Ուրիշ մարդու թող բան չըլնի :

Ես մենակ մեռնիմ իմ հոր թերեն .

Ես մեկ ջան եմ, երթամ կորսվիմ,

Քանց մեր Հայաստան էրկիր ավերի,

Էն հազար-հազար հոգիք կորուսանին :

Դարձավ ասաց.- Հայրի՛կ, ինձ տուր էնոր :

(<< Սասունցի Դավիթ >> - 1981 էջ 6)

Էպոսում Ծովինարը սերնդի սկզբնավորողն է : Ծովինարը հայ միջնադարյան գրականության մեջ ունի նախատիպ ՝ Տիգրանուհին ՝ Տիգրան Երվանդյանի քույրը , որը իմանալով ամուսնու ՝ Մարաց Աժդահակի նենգ նպատակները , ծածուկ սուրհանդակ է ուղարկում Տիգրանի մոտ և կանխում եղբոր դեմ նյութված դավադրությունը : Իսկ խորագետ գեղեցկուհին այս դավաճանությունը հասկանալով , սիրալիր խոսքերով պատասխանում է Աժդահակին և մտերիմների միջոցով շտապ եղբորը հայտնում է նենգությունը : Ծովինարը հղիանում է ջրից , քանի որ ջուրը անմահության ու մաքրության խորհրդանիշն է :

Գլուխ 4

Քրիստոնեական պաշտամունքի դրսևորումները ազգային արժեհամակարգի կերտման գործում

Էպոսի տարբեր էջերում տեսնում ենք քրիստոնեական պաշտամունքի դրսևորումներ: Դրանց առաջին ապացույցներից մեկն այն է , որ Ծովինարը ձևական է ամուսանուն Բաղդադի խալիֆի հետ , որը մահմեդական էր (էպոսում ՝ կռապաշտ) , և քրիստոնեական կրոնը նման ամուսնություն չի թույլատրում : Ծովինարն իր հետ օտար երկիր է տանում նաև քահանա ՝ շեշտելով ցմահ քրիստոնյա մնալու ձգտումը : Ծովինարի խնդրանքով քահանան Բաղդադում Սանասարին ու Բաղդասարին հայերեն գրել , կարդալ է սովորեցնում .

Սանասար ու Բաղդասար պետ կտրիճներ դարձան .

Մերն ասաց քահանային .

- Տերտե՛ր , իմ տղաներին դաս տուր՝ կարդան :

Դաս էտու տղաներին .

Էնոնք գրել-կարդալ սովորեցին (Սասունցի Դավիթ 1981 էջ 18)

Արևմտահայաստանի նշանավոր վանքերից Սուրբ Կարապետը կարևոր դեր ունի էպոսում : Ծովինարի երազում հենց այդ վանքն է զգուշացնում , թե իր որդիներին Խալիֆը մատաղ է խոստացել : Վանքը փրկում է ապագա դյուցազունների կյանքը .

Որդի՛ք , ձեզի մատաղ կանի

Փախե՛ք , գնացեք հայոց թագավորի քաղաք

(Սասունցի Դավիթ 1981 էջ 24)

Քրիստոնեական կրոնի ցայտուն դրսևորում է նաև Սասնա դյուցազունների թևի վրա եղած խաչը , որը , նայած հանգամանքների , գունափոխվում է:

Քրիստոնեական հավատալիքների դրսևորումներից է նաև այն , որ պատերազմ գնալուց առաջ Դավիթը հորեղբորից ՝ Ձենով Հովանից խնդրում է իր հոր Խաչ Պատերազմին .

Ասաց . – Հրողբե՛ր ,

Տու՛ր ինձ Միերի Խաչ Պատերազմին :

Հրողբերն ասաց . –

Ես չեմ կարնա տա .

Թե արժան ես ՝ կը գա քո թևին ,

Թե արժան չես ՝ չի գա քո թևին :

Էդտեղ աստծու հրամանով

Խաչ Պատերազմին իջավ վեր աջ թևին

(Սասունցի Դավիթ 1981 էջ 55)

Քրիստոնեական կրոնի հավատալիքները ամենից ավելի շեշտվում են էպոսի չորրորդ ՝ <<Փոքր Միեր >> ճ յուղում , որի ավարտին հերոսը նորից դիմում է Հիսուս Քրիստոսին ՝ ակնկալելով զորեղ աստվածային օգնություն .

Միեր գնաց հասավ Ոստանա կապան .

Որ հասավ Ոստանա կապան ,

Էնտեղեն մեկ իշխան կար ,

Կապ էթալ , զՄիեր կապեց :

Հատկանշական է էպոսի այն հատվածը , երբ իր ժողովրդի շահը բնազդորեն գիտակցող Իսմիլ Խաթունը գայթակղում է Մեծ Միերին և նրանից որդի ունենում որ իր երկիրը պահող ժառանգ ունենա : Երբ Միերը լսում է, թե ինչ խրատ է տալիս Իսմիլ խաթունը Փոքր Մսրա Մելիքին ով պետք է հայի ճրագը հանգցներ , Մսրա ճրագը վառեր , ուշքի է գալիս ու յոթ տարվա բացակայությունից հետո վերադառնում Սասուն : Միերը զարմանում է որ Իսմիլ Խաթունը դեռ նոր ծնված երեխային սովորեցնում է չարություն գործել , ուրիշի ճրագը հանգցնել , ամբողջ աշխարհը զավթել :

Երբ Դավիթը մենամարտի է դուրս գալիս Մելիքի դեմ , համաձայնում է որ առաջինը հարվածի Մելիքը , այնուհետև առաջին և երկրորդ զարկերը բաշխում է Մելիքի մորը և քրոջը ՝ չկարողանալով դիմանալ նրանց բերած փաստարկներին , ավելի ճիշտ ՝ իր խղճին ՝ դրանով իսկ վտանգելով իր գործի հաջողությունը :

Սասունցի Դավիթը երբ կռվի է դուրս գալիս թշնամու բանակաների դեմ , ամեն անգամ հարձակումից առաջ զգուշացնում է որ քնաշները արթնանան , պատրաստվեն կռվի , չասեն ՝ Դավիթը գող-գող եկավ , գող-գող գնաց :

Սասնա դյուցազունները թշնամու մեջ մարդկային գծեր են տեսնում և միամտորեն հավատում են նրա խոստումներին :

Էպոսի հերոսները չեն դրսևորում ուրիշներին իշխելու , կառավարելու , ուրիշներին ենթարկելու ո՛չ կամք , ո՛չ ջանք , ո՛չ էլ ցանկություն : Նրանք փառամոլ ու իշխանատենչ չեն : Սանասարն ու Բաղդասարը խալիֆի դատաստանը տեսնելուց հետո թողնում հեռանում են : Մեծ Մհերը չի ընդունում Իսմիլ խաթունի առաջարկը ՝ բազմելու Մսրա թագավորության գահին : Դավիթը հաղթելով Մելիքին , մեծահոգաբար պարտված զորքին հրամայում է տուն գնալ և խորհուրդ է տալիս էլ երբեք չհարձակվել Սասունի վրա : Նույն կերպ է վարվում Փոքր Մհերը . օտար երկրում հերթական հաղթանակից հետո նրան առաջարկում են իշխանություն , բայց նա համեստաբար մերժում է :

Էպոսի հերոսները չեն ուզում իշխել ուրիշ երկրի , ուզում են , որ յուրաքանչյուր ժողովուրդ ապրի ինքն իր համար , լինի իր գլխի տերը :

Էպոսի հերոսների վարքը հումանիզմի ու հանդուրժողականության բարձրագույն դրսևորում է : Նրանք ուժեղ են որովհետև բարոյական են, և բարոյական են , որովհետև ուժեղ են :

Գլուխ 5

Հայկական էպոսի հերոսների վարքագիծը ազգային ինքնության համատեքստում

Մարդկային վարքը բարոյապես արժևորելը , նրանց արարքները բարոյականությամ համամարդկային չափանիշներրով և բարոյական հասկացություններով

իմաստավորելն ու գնահատելը ենթադրում են մարդասիրության բարձր մակարդակ , մի վարքագիծ , դիրքորոշում որը վկայում է հայ ժողովրդի քաղաքակրթության , բարոյապաշտության , արդարամտության , միամտության , ազնվության և , այսպես կոչված կյանի դաժան օրենքները չհասկանալու մասին :

Գյություն ունեն իրականության , մարդկանց արարքների ու գործողությունների բարոյական գնահատման տարբեր համակարգեր ՝ բարու և չարի , արդարության,խղճի , ազնվության , վեհանձնության , քաջության մասին տարբեր սահմանումներ :

Եվ երբ բախվում են բարոյական սկզբունենրով հակադիր ազգեր , ապա , որպես կանոն , հաղթում է ուժի իրավունքի վրա հիմնված համակարգը :

Հյակական էպոսում ժողովուրդը շեշտը դնում է խաղաղ, ստեղծագործ աշխատանքով ապրելու վրա , ի տարբերություն թշնամական կողմի , որտեղ կարևորվում է ռազմական դաստիարակությունը :

Մեծ Միհերը վանք-վարժարանում կարճ ժամանակ ուսանելուց հետո յոթ տարեկանում դիմում է մորը , որ նա թույլ տա ՝ որդին գնա սարերը գազան ու հավք զարկի , մարդկանց շարքը մտնի : Մայրը հորդորում է մի քանի տարի սպասել , սակայն մանուկ Միհերը համառում է՝ ասելով , որ ուզում է պատրաստ լինել թշնամու դեմ կանգնելու համար :

Դավիթը անցնում է գրեքե նույն ճանապարհը . փոքր Մսրա Մելիքը, հանձին Դավթի կանխազգալով իր թշնամուն , չի ցանկանում նրան մասնակից դարձնել ուժային ու մարտական խաղերին , որպեսզի չմարզվի ու չհզորանա : Ի վերջո , չենթարկվելով Մելիքին , չանցնելով նրա թրի տակով , Դավիթը վերադառնում է Սասուն և անցնում խաղաղ զբաղմունքի ՝ դառնում գառնարած , հետո նախրապան :

Ոչ մի այրունահեղություն , բացի մի քանի ծուռ արարքներից : Նույնիսկ Ծովասարում նա քանդում է հոր կառուցած պարիսպը , բաց թողնում բայրի գազաններին և իր հետ եկած մարդկանց չի թողնում որսալ գերի գազաններին :

Էպոսում բարոյականության պաշտպանները, բարոյական բարձր արժեքների մարմնավորողները հերոս դյուցազուններն են, ովքեր այնքան ուժեղ են, որ ի զորու են կատարելու անհավատալի սխրանքներ, իրենց կամքը պարտադրելու թե՛ բարոյապես և թե՛ ֆիզիկապես պարտվածներին : Այսինքն՝ նրանք թուլությունից , խեղճությունից դրդված չեն կատարում բարոյական արարքներ այլ դա իրենց ապրելակերպն է , կենսաոճը :

Միեր ձիով ընկավ կապ, ասաց .

<<Հիշա իմ հացն ու գինին , տեր կենդանին,

Մարութա բարձր Աստվածածին >>:

Ասաց , էզար, կտրեց ըզկապ ,

Ազատեց Քուռկիկ ջալալին :

(Սասունցի Դավիթ 1981 էջ 182)

Քրիստոնեական հավատալիքները երևում են նաև էպոսի <<Վերջերգում >> ՝ կապված քրիստոնեական հավատքի երկու կարևոր տոների ՝ Վարդավառի և Համբարձման հետ :

Գլուխ 6

Վիպական ընդհանրացումները <<Սասունցի Դավիթ >> էպոսում

Էպոսի ամենաբնորոշ գիծը նրա հերոսական անպարտելի ոգին է , որ մի կողմից պայմանավորված է նրա նախահիմքում ընկած հին առասպելական դյուցազունների

հերոսական սխրանքներով , մյուս կողմից ՝ արաբական բռնապետության դեմ մղած այն դարավոր հերոսական մաքառումներով , որոնցով բնորոշվում է 7-10-րդ դարերի հայոց պատմությունը :

Նախկին առասպելադյուցազնական հաղթական ոգին դրվել է պատմական որոշակի հողի վրա , տիեզերական հակադիր ուժեր մարմնավորող , իրար հակադրվող բարի դյուցազունների և նրանց չար հակառակորդների անզիջում պայքարը , որ միշտ ավարտվում է բարի դյուցազունների հաղթանակով , պատմականորեն կոնկրետացել է , դարձել է սեփական երկրի հերոսների պայքար ընդդեմ օտար բռնակալների , սեփականների պարտադիր հաղթանակով :

Վիպական հերոսների գերբնական ծագման , ֆիզիկական ու հոգեկան հատկանիշների , նրանց հերոսական սխրանքների, վիպական որոշ իրադրությունների մեջ պահպանվել են բազմաթիվ հին առասպելաբանական գծեր, մինչդեռ հերոսների միջավայրի , բնավորության , մարդկային հատկանիշների , ընտանեկան , կենցաղային հարաբերությունների ու իրադրությունների մեջ կան կոնկրետ տեղական , ազգային յուրահատկություններ : Եվ հիմանականում այդ զույգ իրողությամբ է պայմանավորված << Սասունցի Դավթի >> թե՛ վիպական ընդհանրությունները և թե՛ ազգային յուրահատկությունը :

Սասնա վիպական հերոսների անպարտելի հերոսականության հատկանիշը ամենից առաջ պայմանավորված է նրանց նախնիների գերբնական ծննդով : Սանասարն ու Բաղդասարը սերում են ջրից, հետևաբար նրանք սովորական մախկանացուներ չեն , այլ դյուցազուններ .

Թե խալխ տարով կջոջանար,

Էնոնք օրով ջոջացան

(Սասունցի Դավիթ 1981 էջ 96)

Այս գերբնական նախասկիզբը վիպական գործոնությունների զարգացման հետագա ընթացքում ունենում է իր տրամաբանական հետևանքները : Առաջին հերթին շեշտվում և վեպի տարբեր տեղերուն ընդգծվում է հերոսների ի ծնե ահռելի ֆիզիկական ուժը : Սանասարն ու Բաղդասարը դեռ երեխա ժամանակ խաղալիս վնասում են երեխաներին : Իրենց թափառումներ ի ընթացքում զույգ եղբայրները կանգնում են թագավորական մի ամբողջ բանակի դեմ և բոլորին հաղթում , կոտորում : Սասնա բերդն ու քաղաքը կառուցելիս պոկում են հսկա ժայռաբեկորներ , բերում , իրար վրա դնում , կառուցում ահռելի բերդը :

Երկվորյակ եղբայրների այդ վիթխարի ֆիզիկական ուժը բնավ ինքնանպատակ չէ . այն ուղղված է մարդկանց բարիք գործելու կամ չար , դիվային ուժերից մաչդկանց փրկելու և պաշտպանելու նպատակին : Այս պարագաներում դրսևորվում է դեպի հիմանական պաթոսը ՝ հերոսականությունը իր բոլոր դրական , մարդասիրական հետևանքներով :

Բաղդադի կռապաշատ խալիֆան, որ կամենում է երկվորյակ եղբայրներին զոհել իր կուռքերին , ինքն է չարաչար պատժվում : Ողբայրները սպանում են խալիֆային , ազատում մորը ու խալիֆայի բռնության տակ հեծեծող երկիրը : Սանասարը կռվում է ծովային վիշապի դեմ , ազատաում աղջկան , կռվում էց ջրարգել վիշապի դեմ , ծարաված քաղաքը ապահովում ջրով : Եղբայրները կռվում են կախարդական թագավորի զորեղ փահլևանների դեմ , կոտորում բոլորին , ազատում թագավորի աղջկան :

Պատանի Միերը անզեն գոտեմարտում է Սասնա ճամփանները փակող, սով ու թանկություն պատճառող առյուծի դեմ , հաղթում , ազատում Սասունը սովից ու թանկությունից : Նա կռվում է ահռելի Սպիտակ դևի հետ , հաղթում, սպանում նրան , ազատում գերված Արմաղանին , հետը ամուսնանում :

Երկրի սոցիալական ազատության , քաղաքական ազատության , ինքնապաշտպանության այս գաղափարը այնուհետև դառնում է Դավթի հերոսական արարքների սևեռուն նպատակը : Դավիթը դեռ մանկուց հակադրվում է իր երկրի քաղաքական հակառակորդներին ՝ Մսրին ու մսրցիներին : Դավիթը ոչ մի կերպ չի ընդունում իր ստնտու Իսմիլ խաթունի կուրծքը , նա ուտում է միայն Սասունից բերած մեղր ու կարագը : Մանուկ Դավիթը խաղի ժամանակ պատուհասում է երեխաներին , սպանում կամ վիրավորում : Հակադրության այդ բոլոր միջադեպերում երևան է գալիս Դավթի ուժի , քաջության , հոգեական արիության գերազանցությունը հակադիր կողմի նկատմամբ : Երբ Դավիթը կառուցում է հոր ավերված վանքը , կարգում բանական միաբանություն ՝ իբրև ազգային , հոգևոր ինքնության ու անկախության հաստատություն , այդ իրողությունն արդեն շարժում է Մսրա Մելիքի ցասումն ու բարկությունը : Այստեղից սրվում է Սասուն – Մսըր հակադրությունը ՝ ձեռք բերելով կոնկրետ ազգային – քաղաքական իմաստ : Մսրա Մելիքը չի հանդուրժում Սասնա հոգևոր անկախության վերածնման այդ փաստը և զորքով Խոլբաշուն ուղարկում է Սասուն ՝ ավերելու Մարութա նորաշեն վանքը : Խոլբաշին խորամանկությամբ մտնում է վանք , ավերում , թալանում , կոտորում վանքի միաբանաններին : Զայրացած Դավիթը արմատահան արած ծառով հասնում բնաջնջում է Մսրա ավարառու զորքին , միայն Խոլբաշուն թողնում կենդանի ՝ իբրև գուժկան որ գնա, հայտնի եղելությունը :

Դավթի այս հերոսական արարքը արդեն ունի տիպիկ ազգային բովանդակություն `իբրև ինքնապաշտպանական մաքառումով ուղղված օտար հարստահարիչների , հայրենի սրբությունների նկատմամբ ոտնձգությունների դեմ , որոնցով հարուստ է մեր ժողովրդի անցյալը :

Երբ Դավիթը հարձակվում է Մսրա զորքի վրա , նրան է մոտենում մի ալևոր զինվոր և խնդրում , որ Դավիթը դադարեցնի ջարդը ` հասկացնելով , որ Մսրա Մելիքն է իր թշնամին , Դավիթը թողնում է կոտորածը և իր սուրն ուղղում միայն Մսրա Մելիքի դեմ : Սա ժողովրդի արդար ձայնն է , բռնությամբ զինվորագրված ու պատերազմի դաշտ քշված աշխատավոր անմեղ մարդկանց բողոքը ` ուղղված բռնության ու պատերազմների դեմ : Դավիթն իսկույն համակերպվում է ժողովրդի արդար ձայնին , դադարեցնում կոտորածը , գնում Մսրա Մելիքի վրանը ` բռնակալի հետ մենամարտելու : Ընկնելով Մսրա Մելիքի պատրաստած ծուղակը ` հայտնվում է քառասուն գազանոց հորը : Հորեղբոյր կանչով Դավիթը դուրս է գալիս և տեղի է ունենում մենամարտ : Առաջին և երկրորդ հարվածները զիջելով մորը և քրոջը ` Դավիթը երրորդ հարվածով սպանում է Մսրա Մելիքին ` ընդմիշտ ազատելով իր երկիրը օտարի սպառնալիքներից : Այս է Դավիթի հեռոսական առաքելության պատմական խորհուրդը ` պայքար օտար հարստահարիչների ոտնձգությունների դեմ հանուն ժողովրդի ու երկրի պաշտպանության ու ազատության :

Եզրակացություն

- Էպոսը համակառղմանիորեն տալիս է հայ ժողովրդի ազգային նկարագիրը և սովորողի արժեքային համակարգի ձևավորման գործում ունի բազմակողմանի նշանակություն : Այն անմիջականորեն ազդում է սովորողի արժեհամակարգի վրա :
- Էպոսի ուսումնասիրումը անհրաժեշտ գործընթաց է հայ դպրոցականի համար : Դրա միջոցով նա ծանոթանում է ազգի մշակույթի պատմական որոշակի ժամանակաշրջանով , ժողովրդի մղած պատերազմներին : Կերպարների կերտման բարոյական սկզբունքները ազդում են երեխայի ներաշխարհի և հոգեբանության վրա , հարստացնում ու զարգացնում նրա արժեքային համակարգը,սովորեցնում սիրել հայրենիքը և անհրաժեշտության պահին պայքարել նրա ազատության ու անկախության համար:

Գրականության ցանկ

1. Հայ ժողովրդական հերոսավեպ <<Սասունցի Դավիթ >>, 1981 թ.
2. Ն. Հակոբյան <<Կերպարների կերտման սկզբունքը <<Սասնա ծռեր >> էպոսում >> 1983 թ.
3. <<Սասունցի Դավիթ>> 1981 թ. , Առաջաբան – Ս. Հարությունյան
4. <<Սասնա ծռեր >> 1977 , ժողովրդական վեպ Ս. Հարությունյանի աշխատությամբ
5. Մանուկ Աբեղյան . Երկեր- Ա 1966 թ .